Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի
2011 թվականի ապրիլի 27-ի թիվ 137-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2011թ.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2010 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը, «Հանձնաժողովի 2010 թվականի տարեկան գործունեության ծրագրի», ինչպես նաև ռազմավարության եռամյա ծրագրի կատարմանը: Հանձնաժողովը 2010 թվականին շարունակել է աշխատանքներն՝ ուղղված ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների բացահայտմանը, կանխմանը և արգելմանը, սպառողների շահերի պաշտպանությանը և ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելուն: Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել նաև իր գործունեության հրապարակայնության ապահովման, պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության և Օրենքի ու Հանձնաժողովի կողմից ընդունվող ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) կատարելագործման ուղղություններով:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

2010 թվականին Հանձնաժողովի կողմից աշխատանքները տարվել են տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, մրցակցային միջավայրի կարգավորման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ: Մասնավորապես, ապրանքային շուկայի կառուցվածքը՝ կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը որոշվել և գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությամբ և նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաներում կրկին ուսումնասիրությունների հիման վրա: Այսպես, Հանձնաժողովը 2010 թվականին ուսումնասիրել է 62 ապրանքային շուկա**,** դիտանցում է իրականացրել հարյուրից ավելի ապրանքային շուկաներում, որոնցում գործում են Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (այսուհետ՝ գրանցամատյան) գրանցված 95 տնտեսվարող սուբյեկտներ:

Ուսումնասիրված ապրանքային շուկաների առաջին խումբը՝ ընդգրկում է պարենային ապրանքային 26 շուկաներ, որոնցից 16-ը՝ բարձր կենտրոնացված են, իսկ

10-ը՝ միջին կենտրոնացված: Շուկայի մասնակիցների թիվը տատանվում է 2-ից մինչև 78: Ուսումնասիրված ապրանքային շուկաների երկրորդ խումբը 7 ոչ պարենային ապրանքային շուկաներն են, որոնցից 2-ը՝ բարձր կենտրոնացված են, 4-ը՝ միջին կենտրոնացված և 1-ը՝ ցածր կենտրոնացված: Շուկայի մասնակիցների թիվը տատանվում է 5-ից մինչև 54: Հանձնաժողովը նաև անդրադարձել է սոցիալական ծառայությունների ոլորտին և սահմանել է 6 ապրանքային շուկաներ, որոնցում Նորք տեղեկատվավերլուծական կենտրոնն ունի գերիշխող դիրք և մատուցում է համապատասխան ծառայություններ: 2010 թվականին ուսումնասիրված շուկաների երրորդ խումբը՝ դեղորայքի շրջանառության ոլորտի 23 ապրանքային շուկաներն են: Դեղորայքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներից 5-ը՝ ցածր կենտրոնացված են, 13-ը՝ միջին և 5-ը՝ բարձր: Տասներեք ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Շուկայի մասնակիցների թիվը տատանվում է 3-ից մինչև 30:

Հանձնաժողովի կողմից իրականացվող մշտական դիտանցումներին զուգահեռ որոշակի պարբերականությամբ դիտանցումներ են իրականացվել առաջին անհրաժեշտության մի շարք ընտրանքային ապրանքային շուկաներում՝ ձևավորվող գնային միտումների մասին օպերատիվ տեղեկատվություն ստանալու նպատակով: Դիտանցումներն իրականացվել են բենզինի, դիզելային վառելիքի, հացի, ալյուրի, մակարոնեղենի, բրնձի, արևաձաղկի ձեթի, կարագի, շաքարավազի, կաթնամթերքի, մսի, հավի ձվի և սուրճի շուկաներում: Դիտանցումներն իրականացվել են Երևան քաղաքում ընդհանուր հարկման ռեժիմում գործող մանրածախ առևտրի առավել խոշոր օբյեկտներում:

Հանձնաժողովի կողմից ապրանքների իրացման գների և պայմանների վերաբերյալ պարբերաբար իրականացվող դիտանցումներին մասնակցում են նաև սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները: Այդ նպատակով ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ: Խմբի խնդիրներից է դիտարկել իրացվող ապրանքների գներն ու դրանց փոփոխությունները, ինչպես նաև ապրանքների իրացման պայմանները: Նման համագործակցությունը հասարակական կառույցների հետ նպաստում է դիտարկման արդյունավետության բարձրացմանը և հասարակության շրջանում վստահության ամրապնդմանը:

Արդի պայմաններում բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների գործունեության դիտանցման նպատակն է տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ուղղորդել շուկայական տնտեսության կանոնների պահպանմանը: Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է գտնվում կենտրոնացված գրանցամատյանում գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը՝ դրանց իրացման ծավալները և գների կառուցվածքը:

Ապրանքային շուկայի գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանում ընդգրկված սուբյեկտների կազմը 2010 թվականին 2009 թվականի նկատմամբ փոփոխվել է: Պարենային ապրանքային շուկաների թիվը ավելացել է 9-ով, իսկ դրանցում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը ավելացել է 10-ով: Մեկ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանները վերանայվել են և սահմանվել են երկու տարբեր ապրանքային շուկաներ: Ոչ պարենային ապրանքային շուկաների թիվը ավելացել է 5-ով, իսկ դրանցում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը ավելացել է 11-ով: Գրանցամատյանում գրանցված դեղորայքի շրջանառության ոլորտի ապրանքային 7 շուկաներից պահպանվել են 5-ը և ավելացել 8-ը: 5 ապրանքային շուկաներում էլ տեղի է ունեցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների փոփոխություն:

Տնտեսվարող սուբյեկտների միջև համակենտրոնացման նկատմամբ վերահսկողության գործառույթը հանդիսանում է մրցակցային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: 2010 թվականին Հանձնաժողովն ընդունել է համակենտրոնացմանն առնչվող 16 որոշումներ, ինչպես նաև մի շարք արձանագրային որոշումներ:

Հանձնաժողովը 2010 թվականի ընթացքում ուսումնասիրություններ է իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների առնչությամբ և հանձնարարել տնտեսվարող սուբյեկտներին՝ դադարեցնել և հետագայում բացառել անբարեխիղճ մրցակցության արձանագրված դեպքերը: Անբարեխիղճ մրցակցության, սպառողներին մոլորության և շփոթության մեջ գցելու (այլ տնտեսվարողին պատկանող ապրանքային նշանի կիրառում կամ նմանակում, պարտադիր մակնշման բացակայություն, սխալ մակնշում) հնարավոր դեպքեր են արձանագրվել ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, պաղպաղակի, երշիկեղենի, անձեռոցիկների, հավկիթների և մի շարք այլ ապրանքների շրջանառության ոլորտներում:

Հանձնաժողովը 2010 թվականին գումարել է 45 նիստ և ընդունել 345 որոշում, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության չներկայացմանը վերաբերող 55 որոշում, ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար պատասխանատվություն սահմանող 3 որոշում, անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին առնչվող 130 որոշում, հակամրցակցային համաձայնություններին առնչվող 3 որոշում, ինչպես նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի հնարավոր չարաշահմանն առնչվող 3 որոշում, ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրությանը վերաբերող 28 որոշում: Տրվել են Հանձնաժողովի նախագահի 131, Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի 150 հրամաններ: Իրականացվել են աշխատանքներ ԵրՄՄԳՀ-ի կողմից «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» համակարգչային ծրագրի ներդրման և շահագործման վերաբերյալ: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված

կարգով ատեստավորվել են 5 քաղաքացիական ծառայող, պարտադիր վերապատրաստում են անցել 6 քաղաքացիական ծառայող:

Հանձնաժողովի կողմից ընդունված տուգանք սահմանող որոշումների հիման վրա պետական բյուջե է գանձվել 22 439 180 դրամ: ՀՀ դատարաններ է ներկայացվել 7 հայցադիմում, որոնք գտնվում են դատարանների վարույթներում: 2010 թվականիՎ Հանձնաժողովի դեմ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել 15 հայցադիմում:

2010 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի լրացումների և փոփոխությունների նախագծի մշակման աշխատանքներ: Լրամշակումը միտված էր կատարելագործելու մրցակցային օրենսդրությունը, բարձրացնելու Հանձնաժողովի գործունեության, այդ թվում նաև՝ մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումների կանխման արդյունավետությունը: Հանձնաժողովի կողմից փոփոխություններ են կատարվել ենթաօրենսդրական ակտերում, որոնք վերաբերում են ռեեստրում գրանցված սուբյեկտների դիրքի վերանայմանը եւ համակենտրոնացման հայտարարագրմանը, ինչպես նաև տրվել են պարզաբանումներ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ:

2010 թվականի ընթացքում Հանձնաժողովից առաքվել է թվով 2431 գրություն, մուտք է եղել 6313 գրություն:

2010 թվականին Հանձնաժողովը շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Հանձնաժողովն ակտիվացրել է մրցակցային օրենսդրության քարոզչությունը:

Հասարակությանը հուզող հարցերին առավել մեծ ուշադրություն հատկացնելու նպատակով ընդունվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին որոշում: Հասարակական խորհրդի կազմում ընդգրկված են ոչ միայն պետական, այլև հասարակական և գործարար հատվածի ներկայացուցիչներ, որոնց հետ համատեղ աշխատանքի արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն կունենա առավել արագ և արդյունավետ արձագանքել հատկապես հասարակությանն անհանգստացնող խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կնքել է համագործակցության հուշագրեր և համագործակցության համաձայնագրեր: Հանձնաժողովը 2010 թվականին հաստատել և ընդլայնել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների հետ:

Հանձնաժողովն ընդունել է մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված ռազմավարության եռամյա ծրագիրը, որը թույլ կտա իրականացնել համակարգային փոփոխություններ:

ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել և հրապարակվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հանձնաժողովը 2010 թվականի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացրել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների լուծարվելու փաստը:

2010 թվականի ընթացքում ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաները

Աղյուսակ 1

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրման ժամանակահատվածը	Չափման միավոր	Ապրանքային շուկայի ծավալը	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը*
1	2	3	4	5	6	7	8
1	«Ցորենի ալյուր»	2009	հազ.տ	126.6	51	2	բարձր
2	«Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)»	2009	հազ.լ.	20768.2	36	1	միջին
3	«Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)»	2009	հազ.լ.	72.0	14	1	բարձր
4	«Շաքարավազ»	2009	տոննա	71624.8	6	1	բարձր
5	«Կարագ»	2009	տոննա	2031.5	20	1	միջին
6	«Պանիր»	2010թ.1-ին կիս.	տոննա	509.07	78	-	միջին
7	«Թթվասեր»	2009	տոննա	2954.3	9	2	բարձր
8	«Պաղպաղակ»	2009	տոննա	1517.7	13	3	միջին
9	«Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ»	2009	հազ.լ	3117.8	36	3	միջին
10	«Մածուն և քամած մածուն»	2009	տոննա	2633.8	9	3	բարձր
11	«Յոգուրտ»	2009	տոննա	1049.2	13	3	բարձր
12	«Կեֆիր»	2009	տոննա	248.2	5	3	բարձր
13	«Կաթնաշոռ»	2009	տոննա	783.9	9	3	բարձր
14	«Կաթնաշոռի պանրիկ»	2009	տոննա	113.8	4	2	բարձր
15	«Թան և մածնաբրդոշ»	2009	հազ.լ	423.5	10	-	միջին

16	«Հավի ձու՝կճեպով»	2010թ.1-ին կիս.	մլն.հատ	118.5	6	2	բարձր
17	«Սառեցրած ձկներ»	2009	տոննա	1887.7	20	1	միջին
18	«Բրինձ»	2009	տոննա	9816.8	28	1	միջին
19	«Մայրական կաթին փոխարինող կերեր»	2010թ.1-ին եռ.	տոննա	60.9	7	3	բարձր
20	«Մանկական շիլաներ»	2010թ. 1-ին եռ.	տոննա	17.5	9	3	բարձր
21	«Մանկական խյուսեր (պյուրեներ)»	2010թ.1-ին եռ.	կգ	8293.9	4	2	բարձր
22	«Մանկական հյութեր»	2010թ. 1-ին եռ.	կգ	10874.0	2	2	միջին
23	«Բնական հյութեր»	2009թ.1-ին եռ.	հազ.լ.	7436.3	28	-	միջին
24	«Մայոնեզ»	2009թ.	տոննա	1118.7	20	1	բարձր
25	«Խտացրած կաթ»	2009թ.	տոննա	2591.3	17	1	բարձր
26	«Պահածոյացված ձիթապտուղ»	2009թ.	տոննա	2278.5	21	1	բարձր

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% < CR-3 < 100%, միջին աստիճան՝ եթե 45% < CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

1. «Ցորենի ալյուր» ապրանքային շուկայում 2009 թվականին արտադրվել է 126477,1 տոննա, ներկրվել է՝ 4157,6 տոննա և իրացվել է՝ 126606,2 տոննա ցորենի ալյուր: 2009 թվականին ցորենի ալյուրի շրջանառության ոլորտում գործել են թվով 51 տնտեսվարող սուբյեկտ: «Ցորենի ալյուր» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության նպատակով տեղեկատվություն է պահանջվել ցորենի ալյուր ներկրող, արտադրող և իրացնող թվով 4 տնտեսվարող սուբյեկտից (4 տնտեսվարող սուբյեկտի ընդհանուր բաժինը իրացման ընդհանուր ծավալում կազմում է 85,6 տոկոս), մնացած թվով 47 տնտեսվարող սուբյեկտի մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված իրացման ծավալներն ընդունվել են որպես իրացում: Գյուղացիական տնտեսությունների կողմից ցորենի ալյուրի արտադրության և իրացման ծավալները ընդգրկված չեն ուսումնասիրության արդյունքներում:

Իրացման ծավալներով գրավելով տվյալ շուկայի մեկ երրորդից ավելին՝ «Ալեքս Գրիգ» ընկերությունը «Ցորենի ալյուր» ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող՝ 47,3 տոկոս (59912,9 տոննա), իսկ «Մանանա Գրեյն» ընկերությունը պահպանել է իր գերիշխող դիրքը՝ բաժնի որոշակի փոփոխությամբ (փոփոխվել է 36,77 տոկոսից՝ 34,4 տոկոսի): Շուկայում գործող մնացած թվով 49 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալները միասին կազմում են շուկայի ընդամենը 18,3 տոկոսը: «Ցորենի ալյուր» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

Բուսական յուղի շրջանառության ոլորտում առանձնացվել է երկու ապրանքային շուկա՝ «Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)» և «Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)»:

2. «Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկայի ծավալը 2009 թվականին կազմել է 20 768 164 լիտր, որտեղ իրացման առավել

մեծ ծավալներն ունեցել է «Ալեքս Գրիգ» ընկերությունը՝ 37,5 տոկոս (7 781 929 լիտր) բաժնով և համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկայում 2009 թվականի տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող մյուս երկու տնտեսվարող սուբյեկտներն են «Դոստ Ինտերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16,1 տոկոս (3 345 877 լիտր) և «ՎԱՍ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 10,2 տոկոս (2 125 125,5 լիտր) բաժիններով: «Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է միջին կենտրոնացվածության աստիճան:

3. «Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկայի ծավալը 2009 թվականին կազմել է 72 003 լիտր, որտեղ իրացման ամենամեծ ծավալներն ունեցել է «Վեգեքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 66,0 տոկոս (47 508 լիտր) բաժնով և համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկայում 2009 թվականի տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող մյուս երկու տնտեսվարող սուբյեկտներն են «Կարդինալ Ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 13,1 տոկոս (9450 լիտր) և «Հիքսոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 8,9 տոկոս (6396 լիտր) բաժիններով: «Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

4. «Շաքարավազ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում իրացվել է 71 624 821 կգ շաքարավազ, որտեղ իրացման ամենամեծ ծավալն ունեցել է «Ալեքս-Գրիգ» ընկերությունը: «Շաքարավազ» ապրանքային շուկայում Ալեքս-Գրիգ» ընկերությունը ունի գերիշխող դիրք և նրա բաժինն ընդհանուր իրացման ծավալում կազմել է ընեղեն՝ 71 611 857 կգ (99,99 տոկոս):

5. «Կարագ» ապրանքային շուկայի իրացման ծավալները 2009 թվականին կազմել է 2031,5 տոննա, որտեղ «Ալեքս-Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 711,7 տոննա իրացման ծավալով (35,04%) պահպանել է գերիշխող դիրքը, իսկ «Մառնիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանվել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրից) գրանցումից:

2009 թվականի ընթացքում կարագի արտադրությամբ զբաղվել են թվով 6 տնտեսվարող սուբյեկտ, որոնք արտադրել են 339 տոննա կարագ: Արտադրության առավել մեծ ծավալներ ունեն «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և «Աշտարակ Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը, համապատասխանաբար՝ 250 տոննա (73,72%) և 86,9 տոննա (25,64%) կարագ: Շուկան 2009 թվականին ունեցել է միջին կենտրոնացվածության աստիճան:

6. «Պանիր» ապրանքային շուկայի ուսումնասիրության նպատակով տեղեկատվություն է պահանջվել պանրի շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնող թվով 16 առավել խոշոր տնտեսվարող սուբյեկտներից: Ըստ ներկայացված տեղեկատվության, 2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում

Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 761,9 տոննա պանիր, իրացվել է 509,1 տոննա, որի 69,5 տոկոսը եղել է «լոռի» տեսակի, 12,2 տոկոսը՝ «չանախ» և 18,3 տոկոսը այլ տեսակի պանիր:

«Պանիր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ են ունեցել՝ «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 32,8 տոկոս բաժնով (167,2 տոննա), «Դուստր Մելանյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 6,1 տոկոս բաժնով (30,88 տոննա) և «Արաքս 2» արտադրական կոոպերատիվը՝ 5,3 տոկոս բաժնով (27 տոննա): Փաստորեն, «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը, ունենալով մյուս սուբյեկտների համեմատությամբ իրացման ավելի մեծ ծավալներ, չունի գերիշխող դիրք (չի գրավում շուկայի ընդհանուր իրացման ծավալի առնվազն մեկ երրորդը): Շուկան ունեցել է միջին կենտրոնացվածության աստիճան:

7. «Թթվասեր» ապրանքային շուկայում 2009 թվականին գործել են թվով 9 տնտեսվարող սուբյեկտ, որոնք բոլորն էլ արտադրողներ են: Տնտեսվարող սուբյեկտների տեղեկատվության համաձայն 2009 թվականի ընթացքում թթվասերի արտադրության ծավալը կազմել է՝ 2 956 479 կգ, իրացման ծավալը՝ 2 954 343 կգ:

«Թթվասեր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեն՝ «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 50 տոկոս (1 476 347կգ), «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 35,1 տոկոս (1 038 439կգ) և «Չանախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 4,1 տոկոս (121 702կգ) բաժիններով: «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական և «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, որպես իրացնող իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը՝ 85,1 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Թթվասեր» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

8. «Պաղպաղակ» ապրանքային շուկայում 2009 թվականին գործել են թվով 13 տնտեսվարող սուբյեկտ, որից 3-ը ներկրող են: 2009 թվականի ընթացքում պաղպաղակի ներկրման ծավալը կազմել է 66 672 կգ, արտադրության ծավալը՝ 1 630 693 կգ, իրացման ծավալը՝ 1 517 681 կգ, իսկ արտահանման ծավալը՝ 140 647 կգ: Ընդհանուր իրացման ծավալում ներկրված պաղպաղակի իրացման ծավալը կազմում է 3,7 տոկոս (56 145 կգ), արտադրած պաղպաղակի իրացման ծավալը՝ 96,3 տոկոս (1 461 537 կգ):

«Պաղպաղակ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներն ունեցել են՝ «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 30 տոկոս (455 758 կգ), «Թամարա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 20 տոկոս (304 504,3 կգ) և «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 17 տոկոս (250 864,4կգ) բաժիններով: «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական, «Թամարա» սահմանափակ պատասխանատվությամբ և «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 67 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում

համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Պաղպաղակ» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է միջին կենտրոնացվածության աստիճան:

9. «Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ» ապրանքային շուկայում 2009 թվականին գործել են թվով 37 տնտեսվարող սուբյեկտ: 2009 թվականի ընթացքում պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթի ներկրման ծավալը կազմել է 324 535 լիտր, արտադրության ծավալը՝ 2 900 472 լիտր, իրացման ծավալը՝ 3 117 767 լիտր:

«Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցել են՝ «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 44,5 տոկոս բաժնով (1388850լ), նրան հաջորդում են «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16,7 տոկոս (520409լ) և «Չանախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 8,1 տոկոս (253434լ) բաժիններով: «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական, «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ և «Չանախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, որպես իրացնող իրացման ծավալներով, միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 69,4 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է միջին կենտրոնացվածության աստիճան:

10. «Մածուն և քամած մածուն» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում մածուն և քամած մածուն արտադրվել և իրացվել է թվով 9 տնտեսվարող սուբյեկտի կողմից: Գյուղացիական տնտեսությունների կողմից մածունի իրացման ծավալը կազմել է մածունի իրացման ընդհանուր ծավալի 4,5 տոկոսը:

2009 թվականին արտադրվել է 2 641 701 կգ, իրացվել է 2 633 846 կգ մածուն և քամած մածուն, որտեղ մածնի արտադրության ծավալը կազմել է՝ 2 518 191 կգ, իրացման ծավալը՝ 2 511 113 կգ, իսկ քամած մածնի արտադրության ծավալը՝ 123 510 կգ, իրացման ծավալը՝ 122 733 կգ:

«Մածուն և քամած մածուն» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 36,9 տոկոս բաժնով (971220կգ), «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 31,1 տոկոս բաժնով (819 424կգ) և «Չանախ» ՍՊ ընկերությունը՝ 6,4 տոկոս բաժնով (168 955կգ), որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 74,4 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Մածուն և քամած մածուն» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

11. «Յոգուրտ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում յոգուրտ արտադրել են թվով 2 տնտեսվարող սուբյեկտ, իսկ իրացվող յոգուրտի մնացած պաշարները ներմուծվել է թվով 11 տնտեսվարող սուբյեկտի կողմից:

2009 թվականին յոգուրտի արտադրության ծավալը կազմել է 231205 կգ, ներկրման ծավալը՝ 828 933 կգ, իսկ իրացման ծավալը՝ 1 049 189 կգ: Իրացման

ընդհանուր ծավալում ներկրված յոգուրտի իրացումը կազմում է 78,1 տոկոս (819 252,1 կգ), իսկ արտադրված յոգուրտի իրացումը՝ 21,9 տոկոս:

«Յոգուրտ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Բրենդլիդեր» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 55,3 տոկոս բաժնով (580123 կգ), «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 15,8 տոկոս բաժնով (165776 կգ) և «Արթ Վայն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 7,8 տոկոս բաժնով (81778 կգ), որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 78,9 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Յոգուրտ» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

12. «Կեֆիր» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում կեֆիրի արտադրություն և իրացում իրականացրել են թվով 5 տնտեսվարող սուբյեկտ: 2009 թվականի ընթացքում կեֆիրի արտադրության ծավալը կազմել է՝ 250922 կգ, իրացման ծավալը՝ 248219 կգ:

«Կեֆիր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 36,5 տոկոս բաժնով (90 695 կգ), «Բիո Կաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 33,5 տոկոս բաժնով (83 049 կգ) և «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝18,5 տոկոս բաժնով (45 841 կգ), որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 88,5 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Կեֆիր» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

13. «Կաթնաշոռ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում կաթնաշոռի արտադրություն և իրացում իրականացրել են թվով 9 տնտեսվարող սուբյեկտ: 2009 թվականի ընթացքում կաթնաշոռի արտադրության ծավալը կազմել է՝ 786 475 կգ, իրացման ծավալը՝ 783 875 կգ:

«Կաթնաշոռ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 51,1 տոկոս բաժնով (400 490 կգ), «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 29,4 տոկոս բաժնով (230 775 կգ) և «Չանախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 6,3 տոկոս բաժնով (49 323 կգ), որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 86,8 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Կաթնաշոռ» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

14. 2009 թվականի ընթացքում **կաթնաշոռի պանրիկի** շրջանառության ոլորտում գործել են թվով 4 տնտեսվարող սուբյեկտ, որոնցից երեքը արտադրող են, մեկը՝ ներկրող: 2009 թվականի ընթացքում կաթնաշոռի պանրիկի ներկրման ծավալը կազմել է 3698 կգ, արտադրության ծավալը՝ 111134 կգ, իրացման ծավալը՝ 113797 կգ, արտահանման ծավալը՝ 488 կգ:

«Կաթնաշոռի պանրիկ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 77,5 տոկոս բաժնով (88154 կգ), «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18,7 տոկոս բաժնով (21293 կգ) և «Արթ Վայն» փակ բաժնետիրական ընկերությունը 3,1 տոկոս բաժնով (3536 կգ): «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական և «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան մեկ երկրորդը՝ 96,2 տոկոսը և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Կաթնաշոռի պանրիկ» ապրանքային շուկան 2009 թվականին ունեցել է բարձր կենտրոնացվածության աստիճան:

15. 2009 թվականի ընթացքում **թանի և մածնաբրդոշի** շրջանառության ոլորտում գործել են թվով 10 տնտեսվարող սուբյեկտ: 2009 թվականի ընթացքում թանի և մածնաբրդոշի արտադրության ծավալը կազմել է 423179 լիտր, իրացման ծավալը՝ 423539 լիտր:

«Թան և մածնաբրդոշ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Բիո Կաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 27,4 տոկոս բաժնով (116256լ) և «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 22,3 տոկոս բաժնով (94424լ): «Յու Մի» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ և «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունները որպես իրացնող զբաղեցնում են, համապատասխանաբար, երրորդ և չորրորդ տեղերը՝ 13,5 և 13,2 տոկոս բաժիններով: «Թան և մածնաբրդոշ» ապրանքային շուկան 2009 թվականին ունի միջին կենտրոնացվածության աստիճան:

16. «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել իրացման առավել մեծ ծավալներ ունեցող՝ թվով 6 տնտեսվարող սուբյեկտների ներկայացրած տեղեկատվությունը:

Համաձայն տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2009 թվականի երկրորդ կիսամյակում արտադրվել է 139 973 227 հատ ձու, իսկ 2010 թվականի առաջին կիսամյակում 5 873 438 հատ ձու ավելի՝ 145 846 665 հատ ձու: Իրացման ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է համապատասխանաբար 125 616 775 հատ ձու և 118 497 994 հատ ձու:

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում 2010 թվականի առաջին կիսամյակում ««Արաքս թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերություն և «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերություն» անձանց խումբը 29,16 տոկոս բաժնով և «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունը 26,06 տոկոս բաժնով միասին գրավում են շուկայի 55,22 տոկոսը և տվյալ ապրանքային շուկայում գրավում են գերիշխող դիրք: «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

17. «Սառեցրած ձկներ» ապրանքային շուկայում 2009 թվականին գործել են 20 տնտեսվարող սուբյեկտ: Սառեցրած ձկների իրացման ընդհանուր ծավալը 2009 թվականին կազմել է 1 887 707,15 կգ, որը 5,1 անգամ ավելի է, քան 2007 թվականի (366 552 կգ) իրացման ծավալը:

«Սառեցրած ձկներ» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալում ամենամեծ բաժինն ունի «Մոկոնաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի իրացման ծավալը կազմում է 633 351,00 կգ սառեցրած ձուկ (33,55 տոկոս): «Սալեքս Գրուփ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կորցրել է ապրանքային շուկայում իր գերիշխող դիրքը: «Սառեցրած ձկներ» ապրանքային շուկան միջին կենտրոնացված է:

18. «Բրինձ» ապրանքային շուկայում 2009 թվականի տվյալներով գործել են թվով 27 տնտեսվարող սուբյեկտ, որոնց ներկրման ընդհանուր ծավալը կազմել է 10 307 089,0 կգ, իրացման ծավալը՝ 9 816 836,3 կգ: «Բրինձ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Ալեքս-Գրիգ» ընկերությունը՝ 33,6 տոկոս, «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 15,1 տոկոս, և «Ինվեստ Ինտորգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 14,1 տոկոս: «Ալեքս Գրիգ» ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Կարի Թով» և «Մոկոնաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները «Բրինձ» ապրանքային շուկայում կորցրել են իրենց գերիշխող դիրքը: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

19. «Մայրական կաթին փոխարինող կերեր» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-մարտ ամիսների տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ալեքս Գրիգ» ընկերությունը՝ 59,89 տոկոս, «Նյու Ֆորս» ընկերությունը՝ 20,48 տոկոս և «Սլավէքս» ընկերությունը՝ 10,4 տոկոս բաժիններով, որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 90,77 տոկոս և ունեն գերիշխող դիրք:

«Հայր և որդի Երիցյաններ» ընկերությունը «Մայրական կաթին փոխարինող կերեր» ապրանքային շուկայում կորցրել է գերիշխող դիրքը: «Մայրական կաթին փոխարինող կերեր» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

20. 2010 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներկրվել է 12 955,08 կգ ընդհանուր ծավալով **մանկական շիլաներ** թվով 5 տնտեսվարող սուբյեկտի կողմից և իրացվել՝ 17 522,03 կգ ընդհանուր ծավալով թվով 9 տնտեսվարող սուբյեկտի կողմից:

«Մանկական շիլաներ» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-մարտ ամիսների տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Նյու Ֆորս» ընկերությունը՝ 33,87 տոկոս, «Սլավէքս» ընկերությունը՝ 30,38 տոկոս և «Բեյբի-Սիմ» ընկերությունը՝ 19,43 տոկոս բաժիններով, որոնք միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 83,68 տոկոս և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Մանկական շիլաներ» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

21. 2010 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներկրվել է 7 263,14 կգ ընդհանուր ծավալով **մանկական խյուսեր** թվով 1 տնտեսվարող սուբյեկտի կողմից և իրացվել՝ 8 293,95 կգ ընդհանուր ծավալով մանկական խյուս թվով 4 տնտեսվարող սուբյեկտի կողմից: «Մանկական խյուսեր (պյուրեներ)» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-մարտ ամիսների

տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 87,57 տոկոս և «Նատալի Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 11,96 տոկոս:

«Մանկական խյուսեր (պյուրեներ)» ապրանքային շուկայում 2010 թվականի առաջին երեք ամիսների տվյալներով «Ալեքս Գրիգ» և «Նատալի Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները միասին գրավում են շուկայի ավելի քան մեկ երկրորդը՝ 99,53 տոկոս և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Մանկական խյուսեր (պյուրեներ)» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

22. 2010 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներկրվել է 10 480,41 կգ ընդհանուր ծավալով **մանկական հյութեր** թվով 2 տնտեսվարող սուբյեկտի կողմից և իրացվել՝ 10 873,98 կգ ընդհանուր ծավալով մանկական հյութեր թվով 2 տնտեսվարող սուբյեկտի կողմից: «Մանկական հյութեր» ապրանքային շուկայում 2010 թվականի հունվար-մարտ ամիսների տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեն՝ «Նատալի Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 89,56 տոկոս և «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 10,44 տոկոս բաժիններով, որոնցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Մանկական հյութեր» ապրանքային շուկայում «Սալեքս Գրուփ» ընկերությունը կորցրել է իր գերիշխող դիրքը, իսկ «Ալեքս Գրիգ» ընկերությունը պահպանել է այն: «Մանկական հյութեր» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

23. «Բնական հյութեր» ապրանքային շուկայում 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 3316,0 հազար լիտր բնական հյութեր, արտադրվել՝ 3111,0 հազար լիտր և իրացվել՝ 7436,3 հազար լիտր: «Բնական հյութեր» ապրանքային շուկայում 2009 թվականի առաջին կիսամյակի տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունի «Սարգիս Կարոլինա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 26,9 տոկոս, «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 17,2 տոկոս և «Ֆեռո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 13,5 տոկոս բաժիններով:

«Բնական հյութեր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներն իրացման ծավալներով միասին գրավում են շուկայի 44,1%, իսկ 3 տնտեսվարող սուբյեկտները միասին՝ 57,6%, հետևաբար «Բնական հյութեր» ապրանքային շուկայում առկա չէ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ: «Բնական հյութեր» ապրանքային շուկան ուներ միջին կենտրոնացվածության աստիճան:

24. «Մայոնեզ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 138 244,0 կիլոգրամ մայոնեզ: 2009 թվականին, թվով 20 տնտեսվարող սուբյեկտի կողմից, (որոնցից թվով 2-ը հանդիսանում են արտադրող, իսկ թվով 18-ը՝ ներկրող) Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրվել 1 239 692,0 կիլոգրամ մայոնեզ: «Մայոնեզ» ապրանքային շուկայի իրացման ծավալը 2009 թվականի տվյալներով կազմել է 1 118

745,8 կիլոգրամ: Իրացման առավել մեծ ծավալներ ուներ «Մելիքա ՋՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 52,8 տոկոս: Ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք ընկերությունների բաժինը միասին կազմել է 87,3 տոկոս:

«Մելիքա ՋՄ» ընկերությունը՝ 590 705,4 կիլոգրամ (52,8 տոկոս) իրացման ծավալներով համարվել է գերշխող դիրք ունեցող: «Մայոնեզ» ապրանքային շուկան ուներ բարձր կենտրոնացվածության աստիճան:

25. «Խտացրած կաթ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն խտացրած կաթ են ներկրել թվով 18 տնտեսվարող սուբյեկտ, որոնց ներկրման ընդհանուր ծավալները կազմել է 2 218,9 տոննա խտացրած կաթ:

«Խտացրած կաթ» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2009 թվականին կազմել է 2 591, 3 տոննա, որտեղ իրացման առավել մեծ ծավալներ ունի «Ֆելիքս Սարգ» ընկերությունը՝ 40,1 տոկոս (1 040,08 տոննա), որը համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Խտացրած կաթ» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

26. «Պահածոյացված ձիթապտուղ» ապրանքային շուկայի ծավալը 2009 թվականի տվյալներով կազմել է 2 278 488,8 կիլոգրամ: «Պահածոյացված ձիթապտուղ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցել է «Վեգեքոմ» ընկերությունը՝ 56,3 տոկոս (1 283 843,0 կգ) բաժնով և համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Պահածոյացված ձիթապտուղ» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

2010 թվականի ընթացքում ուսումնասիրված ոչ պարենային ապրանքային շուկաները

Աղյուսակ 2

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրման ժամանակաշրջանը	Չափման միավոր	Ապրանքային շուկայի ծավալը	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարողների թիվը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը*
1	2	3	4	5	6	7	8
1	«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր»	2009թ.	հատ	263185	36	3	միջին
2	«Ջրի սառեցման-տաքացման սարքեր»	2009թ.	հատ	3691	40	1	միջին
3	«Լամինացված մանրահատակ»	2009թ.	հազ.ք.մ.	431.4	54	-	ցածր
4	«Հատակի երեսպատման սալիկներ»	2009թ.	հազ.ք.մ.	1458.9	24	-	միջին
5	«Պատի երեսպատման սալիկներ»	2009թ.	հազ.ք.մ.	1417.5	23	-	միջին
6	«Բենզին»	2009թ.2-րդ կիս.	հազ.տ.	135.3	5	2	բարձր
7	«Դիզելային վառելիք»	2009թ.2-րդ կիս.	հազ.տ.	81.8	7	2	բարձր

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% " CR-3 " 100%, միջին աստիճան՝ եթե 45% ⩽ CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

1. «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում իրացման ընդհանուր ծավալները 2009 թվականին կազմել է 263185 հատ մարդատար ավտոմեքենաների նոր անվադող: Հայաստանի Հանրապետությունում մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր չեն արտադրվել: «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող առաջին երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Բելռոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 69 185 հատ (26,29 տոկոս), «Մեծ անիվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 58 367 հատ (22,18 տոկոս), «Ավտոշեմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 47 961 հատ (18,22 տոկոս): «Բելռոս», «Մեծ անիվ» և «Ավտոշեմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ 175 513 հատ (66,69 տոկոս) իրացման ծավալով «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում համարվել են գերիշխող դիրք ունեցող: «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկան ունի միջին կենտրոնացվածության աստիճան:

2. «Ջրի սառեցման-տաքացման սարքեր» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2009 թվականին կազմել է 3 691 հատ: 2009 թվականին թվով 41 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրվել 4 603 հատ:

Ըստ իրացման ծավալների «Ջրի սառեցման-տաքացման սարքեր» ապրանքային շուկայում առավել մեծ ծավալներ ունեն «ՄԳԱ Վոթըր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 47,1 տոկոս, «Էվրի Դեյ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 14,6 տոկոս և «ԷԴ-Սպո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 5,6 տոկոս բաժիններով:

2009 թվականի տվյալներով «ՄԳԱ Վոթըր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համարվել է «Ջրի սառեցման-տաքացման սարքեր» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող: «Ջրի սառեցման-տաքացման սարքեր» ապրանքային շուկան ունի միջին կենտրոնացվածության աստիճան:

3. «Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկայում 2009 թվականին գործող թվով 54 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 484 728 քառակուսի մետր լամինացված մանրահատակ, իսկ ներկրման ընդհանուր ծավալի մեջ՝ 13,7 տոկոսով, ամենամեծ բաժինն ունի «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

«Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը 2009 թվականին կազմել է 431 434,9 քառակուսի մետր: Ըստ իրացման ծավալների «Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկայում առավել մեծ բաժին ունեցող առաջին 3 տնտեսվարող սուբյեկտներն են «Իմեքս Գրուպ» սանմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 20,8 տոկոս (89 661 քառակուսի մետր), «Ռեվանշշին» սանմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 11,8 տոկոս (50 957 քառակուսի մետր) և «Կլարա» արտադրական կոոպերատիվը՝ 10,0 տոկոս (43210 քառակուսի մետր):

«Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա, իսկ իրացման առավել մեծ ծավալներ ունեցող առաջին երեք

տնտեսվարող սուբյեկտների բաժինները միասին կազմում է 42,6 տոկոս: «Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկան ունի ցածր կենտրոնացվածության աստիճան:

4. «Հատակի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում գործել են թվով 24 տնտեսվարող սուբյեկտ, որոնց կողմից հանրապետություն է ներկրվել 906 576,9 քառակուսի մետր հատակի երեսպատման սալիկներ և իրացվել՝ 1 458 935,2 քառակուսի մետր: 2009 թվականի ընթացքում հանրապետություն երեսպատման սալիկներ են ներկրել թվով 178 տնտեսվարող սուբյեկտ, որոնց ներկրման ծավալը կազմել է 2 114 948,63 քառակուսի մետր:

«Հատակի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայի առաջատար «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրացման ծավալը ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալում կազմում է 416 629 քառակուսի մետր (28,6 տոկոս): Ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող թվով 3 տնտեսվարող սուբյեկտների բաժինները միասին կազմում են ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալի 50,8 տոկոսը: «Հատակի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայում չկա գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, իսկ ապրանքային շուկան միջին կենտրոնացված է:

5. «Պատի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայում 2009 թվականի ընթացքում գործել են թվով 23 տնտեսվարող սուբյեկտ, որոնց կողմից հանրապետություն է ներկրվել 1 156 537,9 քառակուսի մետր պատի երեսպատման սալիկներ և իրացվել՝ 1 417 517 քառակուսի մետր: Ապրանքային շուկայի առաջատար «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրացման ծավալը ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալում կազմել է 371834 քառակուսի մետր (26,2 տոկոս): «Պատի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայում չկա գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, ապրանքային շուկան միջին կենտրոնացված է:

6. «Բենզին» ապրանքային շուկայում 2009 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող առաջին երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ֆլեշ» ընկերությունը՝ 57 686 048 լիտր (42,62 տոկոս), «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը՝ 56 482 800 լիտր (41,76 տոկոս), «Միկա Քորփորեյշն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 12 892 237 (9,5 տոկոս) իրացման ծավալներով: «Ֆլեշ» ընկերությունը՝ 57 686 048 լիտր (42,62 տոկոս) և Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը՝ 56 482 800 լիտր (41,76 տոկոս) իրացման ծավալներով, «Բենզին» ապրանքային շուկայում համարվել են գերիշխող դիրք ունեցող: «Բենզին» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

7. «Դիզելային վառելիք» ապրանքային շուկայում 2009 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում գործել է թվով 7 տնտեսվարող սուբյեկտ:

2009 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում թվով 5 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 35351,7 տոննա դիզելային վառելիք:

Դիզելային վառելիքի ներկրման ընդհանուր ծավալը 2009 թվականի երկրորդ կիսամյակում կազմել է 76 989 406 լիտր, իսկ իրացման ծավալը՝ 81 833 629 լիտր (ներառյալ նախորդ տարվա մնացորդի իրացումը), որից 80 539 572 լիտրն իրացվել է մեծածախ եղանակով և կազմել իրացման ընդհանուր ծավալի 98,4 տոկոսը:

«Դիզելային վառելիք» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ֆլեշ» ընկերությունը՝ 38683521 լիտր (47,3 տոկոս) ծավալով, «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը՝ 33367100 լիտր (40,8 տոկոս) ծավալով և «Միկա Քորփորեյշն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 5701990 լիտր (7,0 տոկոս) ծավալով: Իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտները, որոնք զբաղեցնում են շուկայի մեկ երրորդից ավելին, համապատասխան մասնաբաժիններով գրանցվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանում. «Ֆլեշը» ՝ 47,3 տոկոս, «Սիթի Պետրոլ Գրուպը»՝ 40,8 տոկոս ծավալով: «Դիզելային վառելիք» ապրանքային շուկան ունի բարձր կենտրոնացվածության աստիճան:

2010 թվականի ընթացքում ուսումնասիրված դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաները

Աղյուսակ 3

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայի ծավալը	Ապրանքային շուկայի մասնակից ների թիվը	Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածու թյունը աստիճանը*
1	2	3	4	5	6
1	«Անզգայացնող դեղեր»	202.2	17	-	միջին
2	«Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդություննե րի ժամանակ կիրառվող դեղեր»	1542.4	29	-	միջին
3	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	259.6	20	1	միջին
4	«Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր»	308.9	13	2	բարձր
5	«Հակավարակային դեղեր»	1934.7	25	-	միջին
6	«Հակամիգրենային դեղեր»	39.2	8	1	բարձր
7	«Հակապարկինսոնային դեղեր»	30.8	8	-	միջին
8	«Արյան վրա ազդող դեղեր»	278.1	21	1	բարձր
9	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	57.9	3	2	բարձր
10	«Սիրտանոթային դեղեր»	1284.4	30	-	ցածր
11	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	361.7	23	1	միջին
12	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	193.3	17	1	միջին
13	«Միզամուղներ»	99.5	11	1	բարձր
14	«Ստամոքսաղիքային դեղեր»	682.5	27	-	ցածր
15	«Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ»	299.5	18	-	միջին
16	«Իմունաբանական դեղեր»	251.2	14	-	միջին
17	«Մկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության), խոլինէսթերազի արգելակիչներ»	24.2	10	1	բարձր
18	«Ակնաբուժական դեղեր»	297.4	19	-	միջին
19	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»	17.2	6	1	բարձր
20	«Հոգեմետ դեղեր»	149.6	13	2	միջին
21	«Շնչառական համակարգի վրա ազդող դեղեր»	224.3	16	1	միջին
22	«Ջրաաղային, թթվահիմնային հավասակշռությունը կարգավորող լուծույթներ»	486.1	10	2	բարձր
23	«Վիտամիններ և հանքանյութեր»	274.8	25	-	ցածր

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% " CR-3 " 100%, միջին աստիճան՝ եթե 45% ▯ CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Նշված ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքներից երևում է, որ 3 ապրանքային շուկա ցածր կենտրոնացված են (կենտրոնացվածության

աստիճանը կազմում է 38.0-43.0 տոկոս, մասնակիցների թիվը 25-ից մինչև 30 տնտեսվարող սուբյեկտ), 12 ապրանքային շուկա՝ միջին կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 52.5-66.3 տոկոս, մասնակիցների թիվը 8-ից 29-ը), 8-ը՝ բարձր կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 71.49-100.0 տոկոս, մասնակիցների թիվը 3-ից 18-ը): Նշված ապրանքային շուկաներից 13-ում թվով տասնյոթ տնտեսվարող սուբյեկտներ համարվել են գերիշխող դիրք ունեցող: 11 ապրանքային շուկաներում գործում է գերիշխող դիրք ունեցող 1 տնտեսվարող սուբյեկտ:

Գերիշխող դիրքի առկայությամբ պարենային ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 4

h/h	Ապրանքային շուկայի անվանումը	h/h	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքի իրացման ծավալը			Մասնաբաժինը	Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը*			
								տոկոսը		աստիճանը	
				չ/մ	բնեղեն	արժ. (մլն.դր)		նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.
1	«Պաղպաղակ»	1	«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	455,7	531,4	30.0 %	70.4	67.0	բարձր	միջին
		2	«Թամարա» ՍՊԸ	տ	304,5	338,8	20.0 %				
		3	«Գրանդ Քենդի» ՀՁ ՍՊԸ	տ	250,9	247,3	17.0 %				
2	«Թթվասեր»		«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	1476,3	1013,4	50.0 %	84.7	85.1	բարձր	բարձր
		4	«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	տ	1038,4	715,2	35.1 %				
3	«Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ»		«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	հ.լ.	1338,8	381,7	44.54 %	70.3	69.3	բարձր	միջին
			«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	հ.լ.	520,4	137,5	16.7 %				
		5	«Չանախ» ՍՊԸ	հ.լ.	253,4	66,0	8.1 %				
4	«Մածուն և քամած մածուն»		«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	տ	971,2	361,8	36.9 %		74.4		բարձր
			«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	819,4	299,5	31.1 %				
			«Չանախ» ՍՊԸ	տ	168,9	50,7	6.4 %				
5	«Յոգուրտ»	6	«Բրենդ լիդեր» ՀՁ ՍՊԸ	տ	580,1	662,5	55.3 %		78.9		բարձր
			«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	165,8	152,0	15.8 %				
		7	«Արթ Վայն» ՓԲԸ	տ	81,8	55,1	7.8 %				
6	«Կեֆիր»		«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	տ	90,7	34,5	36.5 %		88.5		բարձր
		8	«Բիո Կաթ» ՍՊԸ	տ	83,0	28,7	33.5 %				
			«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	45,8	21,2	18.5 %				
7	«Կաթնաշոռ»		«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	400,5	499,0	51.1 %		86.8		բարձր

			«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	տ	230,8	277,9	29.4 %				
			«Չանախ» ՍՊԸ	տ	49,3	57,5	6.3 %				
8	«Կաթնաշոռի պանրիկ»		«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	տ	88,1	152,9	77.5 %		99.3		բարձր
			«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	տ	21,3	39,4	18.7 %				
9	«Մայրական կաթին փոխարինող կերեր»	9	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	տ	36,5	60,4	59.89 %	84.2	90.8	բարձր	բարձր
			«Նյու Ֆորս» ՍՊԸ	տ	12,5	69,3	20.48 %				
		10	«Սլավէքս» ՍՊԸ	տ	6,3	25,8	10.4 %				
10	«Մանկական շիլաներ»		«Նյու Ֆորս» ՍՊԸ	տ	5,9	24,5	33.87 %	81.0	83.7	բարձր	բարձր
			«Սլավէքս» ՍՊԸ	տ	5,3	18,9	30.38 %				
		11	«Բեյբի-Սիմ» ՍՊԸ	տ	3,4	6,1	19.43 %				
11	«Մանկական խյուսեր (պյուրեներ)»		«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	կգ	7263,1	13,0	87.57 %	98.3	100.0	բարձր	բարձր
		12	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	կգ	991,7	0,8	11.96 %				
12	«Մանկական հյութեր»		«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	տ	9,7	4,1	89.56 %	99.9	100.0	բարձր	բարձր
			«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	տ	1,1	2,1	10.44 %				
13	«Հավի ձու՝ կճեպով»	13	«Արաքս թռչնաֆաբրիկա» ՓԲԸ	մլն. հատ	18,6	432,7	Անձանց խումբ 29.16 %	85.9	95.9	բարձր	բարձր
		14	«Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ	մլն. հատ	15,9	522,9					
		15	«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ	մլն. հատ	30,8	779,2	77.5 %				
14	«Ցորենի ալյուր»	16	«Մանանա Գրեյն» ՍՊԸ	հ.տ.	43,5	6881,9	18.7 %	78.9	87.6	բարձր	բարձր
			«Ալեքս Գրիգ» ՍՊԸ		59,9	8927,0	77.5 %				
15	«Սառեցրած ձկներ»		«Մոկոնաթ» ՍՊԸ	տ	633,3	422,8	18.7 %	72.3	62.3	բարձր	միջին
16	«Շաքարավազ»		«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	տ	71,6		77.5 %	100.0	100.0	բարձր	բարձր
17	«Կարագ»			տ	711,7	1254,1	18.7 %	84.1	67.6	բարձր	միջին
18	«Բրինձ»			տ	3294,9	922,6	77.5 %	66.6	62.8	միջին	միջին

19	«Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)»			հ.լ.	7781,9	3814,5	18.7 %		63.8		միջին
20	«Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)»	17	«Վեգեքոմ» ՍՊԸ	հ.լ.	47,5	176,8	77.5 %		88.0		բարձր
21	«Պահածոյացված ձիթապտուղ»			տ	1283,8	1683,4	18.7 %		89.0		բարձր
22	«Խտացրած կաթ»	18	«Ֆելիքս Սարգ» ՍՊԸ	տ	1040,1	602,7	77.5 %		74.0		բարձր
23	«Մայոնեզ»	19	«Մելիքա ՋՄ» ՍՊԸ	տ	590,7	496,2	18.7 %		87.3		բարձր

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% " CR-3 " 100%, միջին աստիճան՝ եթե 45% ▯ CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

2010 թվականի ուսումնասիրված 26 պարենային ապրանքային շուկաներից 23-ում առկա էին գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Նշված 23 ապրանքային շուկաներից 17-ը բարձր կենտրոնացված են, իսկ 6-ը՝ միջին կենտրոնացված: Հարկ է նշել, որ 13 ապրանքային շուկաները Հանձնաժողովի կողմից կրկին անգամ են ուսումնասիրվել, իսկ 10-ը առաջին անգամ: Ընդ որում, նախորդ ուսումնասիրության ընթացքում 4 բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում («Պաղպաղակ», «Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ», «Սառեցրած ձկներ», «Կարագ») կենտրոնացվածության աստիճանը նվազել է, իսկ «Բրինձ» ապրանքային շուկայում կենտրոնացվածության աստիճանը մնացել է նույնը:

Պարենային ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը ներկայացված է գծանկարներ 1-ում և 2-ում:

գծանկար 1

2010 թվականի ընթացքում ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը



2010 թվականի ընթացքում ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը դինամիկայում

գծանկար 2



Գերիշխող դիրքի առկայությամբ ոչ պարենային ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 5

հ/հ	Ապրանքային շուկայի անվանումը	հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքի իրացման ծավալը			Մասնաբաժինը	Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը*			
								տոկոսը		աստիճանը	
				չ/մ	բնեղեն	արժ. (մլն.դր)		նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.
1	«Բենզին»	1	«Ֆլեշ» ՍՊԸ	հ.լ.	57686,0	19394,3	42,62%	84.1	93.9	բարձր	բարձր
		2	«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ	հ.լ.	56482,8	18324,7	41,76%				
2	«Դիզելային վառելիք»		«Ֆլեշ» ՍՊԸ	հ.լ.	38683,5	10886,3	47,3%	87.1	95.1	բարձր	բարձր
			«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ	հ.լ.	33367,1	9319,0	40,8%				
3	«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր»	3	«Բելռուս» ՍՊԸ	հատ	69,2	849,1	26,29 %	46.6	66.7	միջին	միջին
		4	«Մեծ անիվ» ՍՊԸ	հատ	58,4	1448,2	22,18 %				
		5	«Ավտոշեմ» ՍՊԸ	հատ	47,9	596,9	18,22 %				
4	«Ջրի սառեցման-տաքացման սարքեր»	6	«ՄԳԱ Վոթըր» ՍՊԸ	հատ	1736	85,5	47,1%		67.4		միջին

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% " CR-3 " 100%, միջին աստիճան՝ եթե 45% □ CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

2010 թվականի ուսումնասիրված 7 ոչ պարենային ապրանքային շուկաներից 4-ում առկա էին գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Նշված 4 ապրանքային շուկաներից 2-ը բարձր կենտրոնացված են, իսկ 2-ը՝ միջին կենտրոնացված: Հարկ է նշել, որ 13 ապրանքային շուկաները Հանձնաժողովի կողմից կրկին անգամ են ուսումնասիրվել 3-ը:

Ոչ պարենային ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը ներկայացված է գծանկար 3-ում:

գծանկար 3

2010 թվականի ընթացքում ուսումնասիրված ոչ պարենային ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը



Գերիշխող դիրքի առկայությամբ դեղորայքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 6

h/h	Ապրանքային շուկայի անվանումը	h/h	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքի իրացման ծավալը		Մասնաբաժինը	Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը*			
							տոկոսը		աստիճանը	
				չ/մ	արժ. (մլն.դր)		նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.
1	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	1	«Ֆարմատեք» ՍՊԸ	մլն. դրամ	95,3	36,7%	58.4	61.8	միջին	միջին
2	«Շնչառական համակարգի վրա ազդող դեղեր»			մլն. դրամ	88,0	39,2%	44.9	61.2	միջին	միջին

3	«Ջրաաղային, թթվահիմնային հավասակշռությունը կարգավորող լուծույթներ»		«Ֆարմատեք» ՍՊԸ	մլն. դրամ	266,6	54,9%	88.0	94.8	բարձր	բարձր
		2	«Լիկվոր» ՓԲԸ	մլն. դրամ	163,3	33,6%				
4	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»		«Ֆարմատեք» ՍՊԸ	մլն. դրամ	170,2	47%	61.0	63.3	միջին	միջին
5	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	3	«Քոմսթար» ՍՊԸ	մլն. դրամ	32,1	55%	82.1	100.0	բարձր	բարձր
			«Լիկվոր» ՓԲԸ	մլն. դրամ	23,4	40%				
6	«Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր»	4	«Նատալի ֆարմ» ՍՊԸ	մլն. դրամ	50,6	30,61 %	62.0	75.9	միջին	բարձր
		5	«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ	մլն. դրամ	39,3	23,80 %				
7	«Հակամիգրենային դեղեր»		«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ	մլն. դրամ	31,4	80,22%	39.1	91.0	ցածր	բարձր
8	«Հոգեմետ դեղեր»	6	«Արփիմեդ» ՍՊԸ	մլն. դրամ	39,9	26,7 %	63.3	66.1	միջին	միջին
			«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ	մլն. դրամ	37,1	24,8 %				
9	«Արյան վրա ազդող դեղեր»	7	«Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» ՍՊԸ	մլն. դրամ	116,1	35,5%	52.0	74.3	միջին	բարձր
10	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	8	«Ջեյ վի էս մեդիմպորտ» ՍՊԸ	մլն. դրամ	64,7	33,4%	49.2	66.3	միջին	միջին
11	«Միզամուղներ»	9	«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ	մլն. դրամ	47,3	47,6%	54.3	75.1	միջին	բարձր
		10	«Լամբրոն-Ֆարմիմպեքս»ՍՊԸ	մլն. դրամ						
12	«Մկանային ապալարիչ ներ (ծայրանդամային ազդեցության), խոլինսթերազի արգելակիչներ»		«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ	մլն. դրամ	11,9	49,03%	70.3	71.5	բարձր	բարձր
			«Լամբրոն-Ֆարմիմպեքս»ՍՊԸ	մլն. դրամ						
13	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»		«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ	մլն. դրամ	11,2	65,2%	81.0	85.6	բարձր	բարձր
			«Լամբրոն-Ֆարմիմպեքս»ՍՊԸ	մլն. դրամ						

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% " CR-3 " 100%, միջին աստիճան՝ եթե 45% ▯ CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

2010 թվականի ուսումնասիրված 23 դեղորայքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներից 13-ում առկա էին գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Նշված 13 ապրանքային շուկաներից 4-ը բարձր կենտրոնացված են, իսկ 8-ը՝ միջին կենտրոնացված, իսկ մեկը վաճր կենտրոնացված է: Հարկ է նշել, նախորդ

ուսումնասիրության ընթացքում 4 միջին կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանը աճել է:

Դեղորայքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը ներկայացված է գծանկար 4-ում:

գծանկար 4

2010 թվականի ընթացքում ուսումնասիրված դեղորայքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը



Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հանձնաժողովն իրականացրել է մի շարք միջոցառումներ մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումների կանխման և վերացման նպատակով, ինչպես նաև նախաձեռնել է կանխարգելիչ գործողություններ մի շարք ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության վերահսկման գործընթացում:

Հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի առևտրի մի շարք օբյեկտներում իրականացված դիտանցումների արդյունքում հոկտեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել է պանրի գների կտրուկ բարձրացում: «Պանիր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հոկտեմբերի 15-ին պանրի գները բարձրացնելուց հետո որոշակի ժամանակ անց՝ հոկտեմբերի 20-ին, 25-ին, մյուս տնտեսվարող սուբյեկտները ևս բարձրացրել են պանրի իրացման գները՝ հետևելով «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերությանը: Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է, որ 2010 թվականի նոյեմբերի 19-ին «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերությունն իջեցրել է որոշակի չափով պանրի իրացման գները, ինչին հետևել են մյուս տնտեսվարող սուբյեկտները: Տնտեսվարող սուբյեկտների ներկայացված հիմնավորումների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ պանրի գնի փոփոխությունը որոշակիորեն տնտեսական գործոնների ազդեցության հետևանք է:

Հավի ձվերի գների բարձրացման պատճառների հայտնաբերման նպատակով հարուցված վարչական վարույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2009 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ 2010 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է հավի ձվի արտադրության ծավալների աճ: Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների՝ 2010 թվականի հունվար-մայիս ամիսներին արձանագրվել է հավի ձվի արտադրության գրեթե 30 տոկոս աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում 2010 թվականի առաջին կիսամյակում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող թվով 6 տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրված հավի ձվի 81,2 տոկոսն իրացվել է ներքին շուկայում, հետևաբար հավի ձվի արտադրության ծավալների աճը հանգեցրել է իրացման գների նվազման: Հատկանշական է, որ ձվի իրացման գների իջեցումը նկատվել է իրացման առավել մեծ ծավալներ ունեցող թվով 6 տնտեսվարող սուբյեկտների մոտ, և իրացման միջին գները՝ ըստ հավի ձվի առանձին տեսակների, միմյանցից էականորեն չեն տարբերվել: Հետևաբար, հավի ձվի իրացման գների իջեցման փաստի վերաբերյալ Օրենքի խախտում չի արձանագրվել:

Վարույթի վերաբերյալ խորհրդատվության նպատակով հրավիրված արտասահմանյան փորձագետները նույնպես վկայեցին, որ արտադրության ծավալների աճը անխուսափելիորեն պետք է հանգեցներ գների իջեցման:

Դրա հետ մեկտեղ, Հանձնաժողովն իրականացրել էր դիտանցումներ հավի ձվի իրացման մանրածախ ոլորտում, որի արդյունքում պարզվել էր, որ այդ ընկերությունների կողմից արտադրված և իրացվող հավի ձվերի վրա, ի թիվս այլ

տեղեկատվության, բացակայում էր պիտանելության ժամկետի մասին նշումը, ինչը կարող է որակվել որպես հասարակության մոլորեցնելու և անբարեխիղճ մրցակցության գործողություն: Հանձնաժողովը որոշում է կայացրել «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում գործող «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ի, «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ի, «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի, «Արաքս թռչնաբուծական ֆաբրիկա» ՓԲԸ-ի և «Զանգափ» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակել տուգանք 500 000-ական դրամի չափով՝ անբարեխիղճ մրցակցության համար:

Միաժամանակ, Հանձնաժողովը «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների («Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերության արտադրած «Յոդացված», «Գյուղական», «Մանկական», «Էլիտար», «Եգիպտացորենի հավկիթներ», 6 հատ պարունակությամբ «Հավկիթ դիետիկ» և «Դիետիկ հավկիթ» անվանումով ու երեսուն հատ պարունակությամբ տարաներով իրացվող հավկիթների տեսակների) վերաբերյալ մի շարք որոշումներ է կայացրել: Բացի այդ, Հանձնաժողովը կիրառել է պատասխանատվության միջոցներ «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունից պահանջված տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար և իր կայացրած որոշումը սահմանված ժամկետում չկատարելու համար: Արդյունքում, «Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկայի» նկատմամբ կիրառված տուգանքի ընդհանուր գումարը կազմեց 5 մլն դրամ:

Հանձնաժողովն անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվության միջոց է կիրառել «ԱրմենՏել» ՓԲԸ նկատմամբ: «ԱրմենՏել» փակ բաժնետրիական ընկերությունը սպառողներին մատուցում էր «Hi-Line» («Հայ Լայն») ծառայություն, որի շրջանակներում իրականացվող ակցիաների վերաբերյալ զանգվածային լրատվության (այդ թվում՝ Ընկերության ինտերնետային կայքով) և արտաքին գովազդի միջոցներով սպառողներին տրամադրվում էր տեղեկատվություն առ այն, որ «Hi-Line» ծառայությանը միանալու դեպքում այն կմատուցվի առանց որևէ վճարի՝ «0 դրամ մոդեմ, 0 դրամ միացում, 0 դրամ առաջին ամիսը»: Հանձնաժողով դիմած սպառողները բողոքել էին, որ թեև մոդեմը հատկացվում է անվճար, սակայն, որպեսզի այն լիարժեք գործեր, անհրաժեշտ էր կատարել համակարգչային կարգավորումներ, միացումներ:

«ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին մատուցվող «Hi-Line» ինտերնետ ծառայության շրջանակում սպառողներին մատուցվող ««Hi-Line» Բոլորի համար» ակցիայի գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների ընթացքում «անվճար ակտիվացում» կամ «ակտիվացում 0 դրամ» բառերի փոխարեն «անվճար միացում» կամ «միացում 0 դրամ» բառերի օգտագործումը, ինչպես նաև որոշ սպառողների կողմից «Hi-Line» ծառայության ակտիվացման համար 3000 դրամ վճարելը Հանձնաժողովը որակել էր որպես ընկերության կողմից առաջարկվող կամ մատուցվող ծառայության պայմանների նկատմամբ հասարակության մոլորեցում՝ որոշում կայացնելով ընկերության նկատմամբ անբարեխիղճ մրցակցության գործողության համար կիրառել տուգանք՝ 500 000 դրամի չափով, հանձնարարելով ընկերությանը դադարեցնել և հետագայում

բացառել գովազդի ընթացքում հասարակության մոլորեցմանը հանգեցնող գործողությունները կամ վարքագիծը:

Անբարեխիղճ մրցակցության կասկածանքով հարուցված վարույթներից է նաև՝ բջջային կապի օպերատոր «ԱրմենՏել» ընկերության նկատմամբ մամուլի հրապարակման հիման վրա Հանձնաժողովի իրականացրած վարույթը: Հրապարակման համաձայն՝ բաժանորդը սպասարկման կենտրոնից ձեռք է բերել 1000 դրամանոց լիցքավորման քարտ՝ գիշերային ժամերին ինտերնետ ծառայությունից օգտվելու նպատակով, և հետագայում պարզել, որ իր հաշվեկշռում ունենալով 360 դրամից պակաս գումար չի կարող օգտվել տվյալ ծառայությունից, իսկ հաշիվը սպառելուց հետո գանձվում է ևս 83 դրամ, ու այդ մասին չեն տեղեկացնում ո՛չ սպասարկման կենտրոնում և ո՛չ էլ ընկերության ինտերնետային կայքում:

Բջջային կապի օպերատորի նման գործելաոճը Հանձնաժողովը որակեց սպառողների մոլորություն և անբարեխիղճ մրցակցություն, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱրմենՏելը» վերացրել է խախտումը և պատրաստակամություն հայտնել փոխհատուցել սպառողներին հասցրած վնասը, որոշում կայացվեց ընկերության նկատմամբ կիրառել մեղմ պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում: Հանձնաժողովը խնդիրը քննարկել է նաև Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ: Պետական այս կառույցը ևս բջջային կապի օպերատորի գործունեությունում խախտում է արձանագրել:

Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների արդյունքում հայտնաբերված փաստերի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում պարզվել էր, որ «Ալեքս Գրիգ» ընկերության կողմից արտադրվող և իրացվող մի շարք անվանումներով օղիների ապրանքային նշաններ անբարեխիղճ մրցակցության դրսևորում են: Հանձնաժողովը «Ալեքս Գրիգ» ընկերության գործողությունները որակելով անբարեխիղճ մրցակցության դրսևորում՝ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշում կայացրեց: Հանձնաժողովի որոշման համաձայն տնտեսվարող սուբյեկտը նաև պետք է դադարեցներ ու հետագայում բացառեր «Зеленая метка» (Զելյոնայա մետկա) և «Рудник» (Ռուդնիկ) անվանումով ապրանքային նշանի օգտագործմամբ օղիների իրացումը որոշմամբ սահմանված ժամկետում:

Հանձնաժողովի մեկ այլ գնահատմամբ, «Ալեքս Գրիգ» ընկերության կողմից արտադրվող «Ուկրաինա» անվանումով օղու ապրանքային նշանը շփոթության աստիճան նման է ուկրաինական «Ալեֆ-Վինալ» ընկերությանը պատկանող «Ուկրաինկային», «Խլոպցի» անվանումովը՝ ուկրաինական «Իմիջ Հոլդինգ» ընկերությանը պատկանող «Խորտիցային», «Մեդոֆե» անվանումով օղու ապրանքային նշանը՝ բրիտանական «Սոյուզ-Վիկտան գրուպ» ընկերությանը պատկանող «Մեդոֆֆ» անվանումով ապրանքային նշանին, «Պրեմիումը»՝ ուկրաինական «Դոնեցկիյ լիկյորո-վոդոչնիյ զավոդ «Լիկ»» ընկերությանը պատկանող «Պրայմին», իսկ «Խլեբնիյ դար» անվանումով օղու արտադրության և իրացման ընթացքում պիտակների վրա ծանոթագրական գրառումների ուկրաիներեն կատարումն անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ են և արգելվում են Օրենքով: Անբարեխիղճ մրցակցության յուրաքանչյուր դեպքի համար, Հանձնաժողովը «Ալեքս Գրիգ»

ընկերության նկատմամբ նշանակել է տուգանք և հանձնարարել այդ օրինների իրացումը դադարեցնել և հետագայում բացառել:

Հանձնաժողովը քննարկել է նաև բողոքի հիման վրա քաղցրավենիքի մի շարք արտադրատեսակների ապրանքային նշանների ապօրինաբար օգտագործման հարցը: Սակայն, հաշվի առնելով, որ բարձրացված հարցերը կարգավորվում են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով, Հանձնաժողովն դադարեցրել է վարույթները:

Երևանի առևտրի կետերում Հանձնաժողովի կատարած դիտանցումների արդյունքում հայտնաբերվել էին անձեռոցիկներ, որոնց փաթեթավորման վրա բացակայում էր պարտադիր մակնշումը: Տնտեսվարող սուբյեկտների այս գործողությունները որակելով որպես սպառողների մոլորեցում, ապակողմնորոշում և անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ Հանձնաժողովը որոշում կայացրեց այդ ընկերությունների նկատմամբ նշանակել տուգանք՝ 500 000-ական դրամի չափով: Հանձնաժողովը անբարեխիղճ մրցակցության գործողություն է որակել նաև մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվող անձեռոցիկների փաթեթավորման վրա այլ ընկերությունների սեփականությունը հանդիսացող միջազգայնորեն գրանցված ապրանքային նշանների օգտագործումը:

Սպառողական շուկայում հայտնված «Molpe» ապրանքանիշն արտադրող «ԳԳԳ Մանուկյան» ընկերության նկատմամբ Հանձնաժողովը վարչական վարույթ է իրականացրել: Այս ընկերության արտադրած կանացի հիգիենիկ միջոցների փաթեթավորումը, համապատասխան փորձագիտական եզրակացության հավաստմամբ, շփոթության աստիճան նման է միջազգայնորեն ճանաչված «Molped» ապրանքանիշի փաթեթավորմանը, և այդպիսին կարող է ոչ միայն մոլորության մեջ գցել սպառողին, այլև վնաս հասցնել նրա առողջությանը: Անբարեխիղճ մրցակցության գործողության համար Հանձնաժողովը որոշել էր տուգանել «ԳԳԳ Մանուկյան» ընկերությանը և պարտադրել ընկերությանը դադարեցնել «Molpe» ապրանքանիշի շրջանառությունը:

Հանձնաժողովը իրականացրել է աշխատանքներ կապված տնտեսվարող սուբյեկտի ապրանքային շուկա ազատ մուտք գործելու ապահովման համար, մասնավորապես, Հանձնաժողովը քննարկել է համակարգչային տեխնիկայի շուկայում գործող «Ֆայն» ընկերության դիմումը, համաձայն որի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» կողմից իրականացվող «Համակարգիչ բոլորի համար» ծրագրին (նաև պիլոտային մասին) մասնակցելու համար ընկերությունը մի քանի անգամ դիմել է, սակայն որևէ պատասխան չի ստացել: Դիմելով Հանձնաժողովին, «Ֆայն» ընկերությունը խնդրել է հարուցել վարույթ և ուսումնասիրել «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» կողմից իրենց ընկերության նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու մասին հարցը: Հարուցված վարչական վարույթի ընթացքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» Հանձնաժողովի հարցմանն ի պատասխան հայտնել են, որ ծրագրին կարող են միանալ բոլոր վաճառակետերը, որոնք համապատասխանում են որոշակի չափորոշիչների: Ավելի ուշ, «Ֆայն» ընկերությունը դիմել է Հանձնաժողով, խնդրելով կարճել վարչական վարույթը և հայտնելով, որ ընկերության Երևանի խանութն

ընդգրկվել է ծրագրի պիլոտային փուլում: Քանի որ ընկերության բարձրացրած խնդիրը կարգավորվել է, Հանձնաժողովը վարույթը կարճել է:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ Օրենքի հնարավոր խախտումների՝ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումների վերաբերյալ: Հարցի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից գրություններ են ուղարկվել տնտեսվարող սուբյեկտներին, կատարված գործարքների և գործողությունների վերաբերյալ բացատրություններ և պարզաբանումներ ստանալու նպատակով: Ավարտվել են ուսումնասիրությունները մի շարք տնտեսվարող սուբյեկտների առնչությամբ: Հանձնաժողովը կայացրել է որոշումներ, չորս համակենտրոնացումների թույլտվության վերաբերյալ:

Հանձնաժողովի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 251-րդ կետը և գերակա խնդիրների ցանկի 86-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 78.2-րդ կետը:

Օրենքի Նախագծի նպատակն է.

1) Հանձնաժողովի կողմից ստուգումների իրավասության ընդլայնումը,

2) Պատասխանատվության միջոցների չափերի հստակեցումը և խստացումը,

3) Օրենքի խախտումների վերաբերյալ ապացույցների ձեռքբերման և ամրապնդման մեխանիզմների ընդարձակումը,

4) հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախազգուշացման առումով, ինչպես նաև մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կանխման նպատակով՝ Օրենքի համապատասխան նորմերում իրավախախտման տարրերի հստակեցումը,

5) Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնումը, կանխարգելիչ գործառույթների սահմանումը,

6) Օրենքի նորմերի հստակեցումը՝ հաշվի առնելով իրավակիրառ փորձը, Հանձնաժողովի որոշումների դեմ բերված վարչական բողոքներում և դատական հայցերում, ինչպես նաև դրանց քննարկման արդյունքում կայացված ակտերում Օրենքի դրույթների վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները, եզրահանգումները,

7) այլ օրենքների հետ համապատասխանության ապահովումը:

2. Ներկայացված նախագծով ընդհանուր առմամբ առաջարկվում են հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Պատասխանատվության միջոցների հստակեցման և խստացման վերաբերյալ: Նախագծով խստացվում են պատասխանատվության միջոցները հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու), գերիշխող դիրքի չարաշահման, օրենքով նախատեսված դեպքում համակենտրոնացումը չհայտարարագրելու, արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու, անբարեխիղճ մրցակցության գործողության համար: Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով միջազգային փորձը, Հանձնաժողովին լիազորություն է վերապահվում, հաշվի առնելով Օրենքի խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտին և նրա արարքը բնութագրող հատկանիշները, նրա նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում՝անհրաժեշտության դեպքում կիրառելով ավելի մեղմ կամ ավելի խիստ պատասխանատվության միջոցներ:
- Վերահսկողական իրավասությունների վերաբերյալ: Նախատեսվում է սահմանել ստուգման իրականացման հնարավորությունը նաև տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման և Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով, ինչը կնպաստի ստուգումների իրականացման օպերատիվությանը և ստուգումների արդյունքում ձեռք բերվող տեղեկատվության արդյունավետ օգտագործմանը՝ Օրենքի խախտումների բացահայտման իմաստով:
- Ապացույցների ձեռքբերման վերաբերյալ: Նախատեսվում է ներդնել Հանձնաժողովի կողմից դիտանցումների և հսկիչ գնումների իրականացման արդյուավետ մեխանիզմներ, ինչը կնպաստի ինչպես համապատասխան տեղեկատվության հնարավորինս արագ ձեռքբերմանը, այնպես էլ Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթների իրականացմանը, քանի որ տնտեսվարող սուբյեկտները, տեղեկացված լինելով Հանձնաժողովի կողմից իրականացվող դիտանցումների և հսկիչ գնումների մասին, ձեռնպահ կմնան իրավախախտ վարքագծի դրսևորումներից:
- Հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի, անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ: Նախագծով հստակեցվում են հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահումների և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների իրավական բնորոշումները: Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման առումով սահմանվում է միջազգային մրցակցային օրենսդրության մեջ լայնորեն կիրառվող և մեծ արդյունավետություն ունեցող, այսպես կոչված, «հանդուրժողականության սկզբունքը», երբ հակամրցակցային համաձայնության մասին առաջինը կամովին հայտնած տնտեսվարող սուբյեկտը ազատվում է հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նախատեսված պատասխանատվությունից, եթե կամովին պարտավորվում է դադարեցնել այդ համաձայնությանն իր մասնակցությունը և հետագայում բացառել այն՝ միաժամանակ ներկայացնելով տվյալ հակամրցակցային համաձայնության փաստի բացահայտման համար անհրաժեշտ տեղեկություններ: Ի տարբերություն գործող Օրենքի, որում սահմանված են տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի որոշման միայն

քանակական չափանիներ, նախատեսվում է սահմանել նաև գերիշխող դիրքի որոշման որակական չափանիշներ, որպիսի պայմաններում գերիշխող դիրք ունեցող կհամարվեն նաև շուկայում իրական ազդեցություն ունեցող այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք քանակական ցուցանիշներով գերիշխող դիրք ունեցող չէին համարվի՝ ունենալով «շուկայական իշխանություն»: Առաջարկվում է նաև սահմանել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների լուծարման վերաբերյալ Հանձնաժողովին տեղեկացնելու պարտականությունը:

- Հանձնաժողովի կանխարգելիչ լիազորությունների վերաբերյալ: Սահմանվում է Հանձնաժողովի լիազորությունը՝ տնտեսվարող սուբյեկտներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց Օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացումներ տալու մասին, ինչը կնպաստի Հանձնաժողովի կողմից Օրենքների խախտումների կանխման ուղղությամբ արդյունավետ գործունեության իրականացմանը:
- Հանձնաժողովի նախագահի լիազորությունների վերաբերյալ: Նախատեսվում է հստակեցնել Հանձնաժողովի նախագահի իրավասությունները՝ ստուգումների, դիտանցումների կամ հսկիչ գնումների վերաբերյալ հրամաններ ընդունելու վերաբերյալ, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության օպերատիվության բարձրացման նպատակով սահմանել տնտեսվարող սուբյեկտներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու իրավասությունը:
- Այլ օրենքների վերաբերյալ: Առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել նաև մի շարք այլ օրենքներում (հարակից օրենքներ), որոնք դրույթներ են պարունակում տնտեսական մրցակցությանը վերաբերող, ինչպես նաև Հանձնաժողովի խնդիրներին կամ գործառույթներին առնչվող իրավահարաբերությունների վերաբերյալ: Հարակից օրենքներում կատարվող փոփոխությունները և լրացումները նպատակաուղղված են վերը նշված խնդիրների իրականացմանը, ինչպես նաև Օրենքի և համապատասխան այլ օրենքների միջև առկա անհամապատասխանությունների վերացմանը:

Նախագծի ընդունման արդյունքում հնարավորինս արդյունավետ կլուծվեն վերը նշված խնդիրները, զգալիորեն կմեծանա Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման, ինչպես նաև Օրենքի խախտումների կանխման, բացահայտման և հետևանքների վերացման ուղղությամբ:

Հանձնաժողովը 2010 թվականին համագործակցությունն հիմնականում ուղղորդել է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցությանն ուղղված քարոզչությանը, մրցակցային օրենսդրության բարեփոխմանը և Հանձնաժողովի դերի բարձրացմանը: Աշխատանքներ են իրականացվել Հանձնաժողովի և շահագրգիռ այլ մարմինների աշխատակիցների կարողությունների զարգացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և հասարակության շրջանակներում մրցակցային օրենսդրության իրազեկվածության բարձրացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ձևավորել միասնական մոտեցում և հանրապետությունում զարգացնել «մրցակցային մշակույթը»:

Բազմակողմ համագործակցության շրջանակում Հանձնաժողովը շարունակել է մասնակցել Միջազգային մրցակցային ցանց կազմակերպության (ՄՄՑ/ICN), ԱՊՀ անդամ-պետությունների Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ/MCAП), Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD), ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) տարեկան նիստերին և հանդիպումներին, ինչպես նաև աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին:

Հանձնաժողովը, ԱՊՀ անդամ-պետությունների Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամակցության շրջանակներում մասնակցել է Խորհրդի ներքո գործող Հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի (այսուհետ՝ Շտաբ) շրջանակներում իրականացվող համատեղ վարույթներին՝ ավիափոխադրումների, հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի և մանրածախ առևտրի ոլորտներում:

Հանձնաժողովը, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի հետ համագործակցության շրջանակներում աջակցել է վերջինիս փորձագետներին մշակելու «Հայաստանի օրինակով մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ կամավոր փորձագիտական գնահատման զեկույցը», որի արդյունքները ներկայացվել են 2010 թվականին նոյեմբերին՝ Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում, ՄԱԿ-ի 6-րդ համաժողովի ընթացքում: Համաժողովին մասնակցել են ավելի քան 100 երկրների մրցակցային մարմինների և միջազգային կառույցների ներկայացուցիչներ: Համաժողովի աշխատանքային մեկ ամբողջ օր նվիրվել է Հայաստանի մրցակցային իրավիճակի, այդ ոլորտում բարեփոխումների ներկայացմանն ու քննարկմանը: Համաժողովի մասնակիցները և կազմակերպիչները բարձր են գնահատել Հայաստանի կողմից ձեռնարկված քայլերը: Փորձագիտական առաջարկներին արագ և արդյունավետ արձագանքելու Հայաստանի օրինակը ճանաչվել է լավագույնը: Մասնակից երկրներից շատերը, մասնավորապես՝ Սերբիան և Իտալիան, ցանկություն են հայտնել հետևելու մրցակցության ոլորտում Հայաստանի սկսած բարեփոխումների օրինակին: Հանձնաժողովի ձեռնարկած նախաձեռնությանն աջակցել են նաև Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կառույցները (OSCE, GIZ, WB):

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում Հանձնաժողովը սկսել է աշխատանքներ իրականացնել Թվինինգ գործիքի կիրառմամբ՝ «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» անվանումը կրող ծրագրի (այսուհետ՝ Թվինինգ ծրագիր) գործընկերոջ[1] ընտրության և պայմանագրի կնքման համար: Թվինինգ ծրագրի գործընկերներ են ընտրվել Գերմանիայի տնտեսության և տեխնոլոգիայի դաշնային նախարարությունը և Լիտվայի Հանրապետության Մրցակցության խորհուրդը: Թվինինգ ծրագրի պայմանագրային բանակցությունների գործընթացում Հանձնաժողովի

[1] Հանձնաժողովի հետ համագործակցելու համար համատեղ հայտեր էին ներկայացրել Գերմանիայի տնտեսության և տեխնոլոգիայի դաշնային նախարարությունը և Լիտվայի Հանրապետության Մրցակցության խորհուրդը, ինչպես նաև Իտալիայի մրցակցային մարմինը և Միացյալ Թագավորության Արդար առևտրի գրասենյակը:

պատվիրակությունը մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, որի արդյունքում նախագծվել են պայմանագրով նախատեսվող գործողությունների հիմնական ուղղությունները: Թվինինգ ծրագրի իրականացումը նպաստելու է պետական օժանդակության վերահսկման բարելավմանը, քարոզչությանն ուղղված միջոցառումների զարգացմանը և Հանձնաժողովի առավել թափանցիկ գործունեության խթանմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման մեխանիզմների կատարելագործմանը՝ ԵՄ չափանիշներին համահունչ:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության[2] (GIZ) հետ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում շարունակել է աշխատանքները Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթաց-քննարկումներ կազմակերպելու համար և Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների շուրջ փորձագիտական խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ, մասնավորապես՝ «Հավի ձու՝ կճեպով», պանիր ապրանքային շուկաներում, «գերարագ» ինտերնետ ծառայության ոլորտում և «Էյր Արմենիա» ՓԲ ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարույթի վերաբերյալ, ինչպես նաև մի շարք այլ միջոցառում:

Մասնավորապես, կարևորելով ԶԼՄ ներկայացուցիչների դերն իբրև հասարակության և Հանձնաժողովի միջև միջնորդ օղակ, 2010 թվականի նոյեմբերի 22-23-ին, Ծաղկաձորում՝ Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի և միջազգային փորձագետների մասնակցությամբ, կազմակերպվել է «Տնտեսական մրցակցության խնդիրների լուսաբանումը» թեմայով սեմինար, որին մասնակցել են տնտեսական մրցակցության ոլորտը լուսաբանող շուրջ երկու տասնյակ լրագրողներ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նման միջոցառումներ կազմակերպել նաև 2011 թվականին:

Նպատակ ունենալով խթանել Հանձնաժողովի, կառավարման, ոլորտը կարգավորող և դատական մարմինների միջև համագործակցությունը, ինչպես նաև նպաստելու պաշտոնյաների կարողությունների զարգացմանը մրցակցային օրենքի և քաղաքականության կիրարկման բնագավառում 2010 թվականի մարտին կազմակերպվել է «Մրցակցություն, քաղաքականություն, կարգավորում և որակի ենթակառուցվածք» թեմայով ուսայց Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Ուսայցին Հանձնաժողովի ներկայացուցիչների հետ միասին մասնակցել են ՀՀ էկոնոմիկային նախարարը, ՀՀ վարչական դատարանի նախագահը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող մարմնի ներկայացուցիչները:

Հանձնաժողովը բանակցել և կազմակերպել է մի շարք հանդիպումներ Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ/OSCE) ղեկավարների և պատասխանատուների հետ, որի արդյունքում մշակվել և ստորագրվել է փոխըմբռնման և համագործակցության հուշագիր: Հուշագիրը նպատակ ունի համատեղ ուժերով նպաստել մրցակցային քաղաքականության

[2] Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը (GTZ) 2011 թվականից վերափոխվել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ):

զարգացմանն ու կիրառմանը Հայաստանի Հանրապետությունում՝ միաժամանակ ամրապնդելով Հանձնաժողովի դիրքը միջազգային ասպարեզում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցային հարցերով Բուդապեշտի տարածաշրջանային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) հետ համագործակցության շրջանակներում Կենտրոնի երկրորդ արտագնա աշխատանքային համաժողովը՝ «Գերիշխող դիրքի չարաշահում» թեմայով կազմակերպվել է Երևանում, որին մասնակցել են ներկայացուցիչներ՝ Ալբանիայից, Բելառուսից, Խորվաթիայից, Ղազախստանից, Մակեդոնիայից, Մոլդովայից, Ռումինիայից, Ռուսաստանից, Սերբիայից, Ուկրաինայից և փորձագետներ՝ Ավստրիայից, ԱՄՆ-ից, Հունգարիայից, Պորտուգալիայից, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունից (ՏՀԶԿ/OECD): Համաժողովի նպատակն է եղել կլոր սեղանի շուրջ քննարկումների ձևաչափով թեմատիկ վարույթների և ապրանքային շուկաներում մրցակցության խաթարումը բացահայտելու համար գնահատման մեթոդաբանության ներկայացումը, ինչպես նաև նպաստելու Հայաստանի մրցակցային դաշտի օրենսդրության լրամշակումներին՝ միջազգային չափանիշներին համահունչ:

Համաշխարհային Բանկի (WB) հետ «Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության վարկի (ԶՔՎ) երկրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի թիվ ՄԶԸ Ք670-ԱՄ» վարկային ծրագրի շրջանակում «Մրցակցության քաղաքականության կարգավորիչ դաշտի հզորացում» տեխնիկական աջակցության ծրագրի ներքո Հանձնաժողովը՝ միջազգային փորձագետի հետ համատեղ աշխատանքներ է իրականացրել մշակելու «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները և լրացումները: Հանձնաժողովը բանակցություններ է վարել Համաշխարհային Բանկի պատասխանատուների և փորձագետների հետ առկա խնդիրների լուծման ուղղությունները:

Հանձնաժողովը բանակցել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Երևանյան գրասենյակի (USAID), Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF), Ի-Վի Քոնսալթինգի «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության ուղղությունների հստակեցման և նոր ծրագրային առաջարկների ձևավորման ուղղությամբ:

Միաժամանակ, շարունակվել է համագործակցությունը արտերկրյա մրցակցության մարմինների հետ՝ վերապատրաստման, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդել է այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով:

Հանձնաժողովը 2010 թվականին կնքել է համագործակցության հուշագիր Լեռնային Ղարաբաղի հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության կարգավորման պետական հանձնաժողովի հետ, որի շրջանակներում մրցակցության

քաղաքականության կիրարկման բնագավառում փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ:

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների կանխման և հնարավոր դեպքերի բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով Հանձնաժողովի և սպառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների միջև ստորագրվել է համագործակցության հուշագիրը:

Հանրության հետ կապերի ակտիվացման, քաղաքացիների դիմում-բողոքների քննարկման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և Հանձնաժողովի գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու նպատակով Հանձնաժողովը բարեփոխել է «Թեժ գիծ» ծառայությունը: Տնտեսվարողների կողմից շուկայում հակամրցակցային դրսևորումների, գերիշխող դիրքի չարաշահման, սպառողներին մոլորության և շփոթության մեջ գցելու (այլ տնտեսվարողին պատկանող ապրանքային նշանի կիրառում կամ նմանակում, պարտադիր մակնշման բացակայություն, սխալ մակնշում) հնարավոր դեպքերի մասին քաղաքացիներն այսուհետև կարող են տեղեկացնել Հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանը (ռեեստր) պարբերաբար ներկայացվում է Հանձնաժողովի ինտերնետային էջում (www.competition.am)՝ գործունեության բաժնում:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2010 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2010 թվականի բյուջեով, որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս նախատեսվել է 202134.5 հազար դրամ:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի Անվանումները	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Դրամարկղային ծախս
Ընթացիկ ծախսեր	202134,5	202124,2
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	151357,1	151357,1
-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	6487,1	6487,1
-Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	20486,6	20486,6
-էներգետիկ ծառայություններ	2767,5	2767,5
-Կոմունալ ծառայություններ	196,2	196,2
-Կապի ծառայություններ	6185,3	6185,3
-Ներքին գործուղումներ	-	-
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	6066,3	6066,3
-Տեղակատվական ծառայություններ	827,8	827,8
-Ներկայացուցչական ծախսեր	1000,0	1000,0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	208,8	208,8
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2804,0	2804,0
-Գրասենյակային նյութեր և հագուստ	1620,7	1620,2
-Տրանսպորտային նյութեր	1978,0	1978,0
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	137,1	132,8
-Այլ հարկեր	12,0	6,5